

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒԶԱԿԸ ԳԵՐՄԱՆԵՐԻՆ ԼԵԶՈՒՈՎ

Միջնագրի հայ բանաստեղծական գրականությունից մասին սրանից կես դար առաջ յըստակ պաղափար շունչինք մինչև իսկ մենք, Հայերս: Ճիշդ է, այդ կարգի ոտանաւորների նմուշներ աւելի առաջ եւս կային հրատարակուած այս կամ այն պարբերականի (օրինակ «Բազմավէպ»ի) եւ կամ երգարանի (օր. «Քնար Հայկական» եւ ուրիշ) մէջ, եւ սակայն՝ միջնագրեան հայ բանաստեղծութիւնը, որպէս այդպիսին, չարունակուած էր մնալ անտեսուած: Անցեալ դարու իննսունական թուականներին էր որ ծանօթ Հայագէտ Կարապետ Կոստանեանց առանձին հատորիկներով հրապարակ հանեց մի շարք գանձեր մեր անցալի այդ թանկագին ժառանգութիւնից— «Յովհաննէս Թլուրանցին եւ իր տաղերը» (Թիֆլիս 1892), «Նոր ժողովածու»ի երեք պրակներ (Թիֆլիս 1892-1896), «Արտիշ Նազաչ եւ իր տաղերը» (էջմիածին 1898), «Գրիգոր Աղթամարցին եւ իր տաղերը» (Թիֆլիս 1898), եւ այլն:

Յիշեալ հրատարակութեանց շարքում չէր ներկայացուած սակայն, աւելի ճիշդը՝ ամբողջական դէմքով տակաւին չէր ներկայացուած մեր միջնագրեան բանաստեղծութեան արքան՝ Նահապետ Քուշակը: Մեծապէս զնահատելի այդ դործ կատարեց հետագային Արշակ Զօպանեան, 1902ին Փարիզում հրապարակ հանելով «Նահապետ Քուշակի Դիւանը» անունով քննական հրատարակութիւնը: Վերջինիս արժէքը աւելի է ոչ միայն նրանով, որ ունի բազմաթիւ ծանօթագրութիւններ ու մի լսաւացանկ, այլ եւ նրանով, որ պարունակում է մի ընդարձակ եւ հմտալից ուսումնասիրութիւն Քուշակի եւ առհասարակ բուշակեան բանաստեղծութեան մասին: Զօպանեան այնուհետեւ շարունա-

կեց իր այդ կարգի աշխատանքները (ուրիշ կըտորներ եւս հրատարակութեան տալով իր «Հայ էջնութիւն» եւ «Անահիտ»ում), հանրութեան սեփականութիւն դարձնելով ու սիրցնել տալով մե միջնագրեան սրական ուղի: Եւ ործութիւնները, առհասարակ: Աւելի ուշ, նման աշխատանքներ կատարեցին նաեւ ուրիշ բանասէրներ: Այսպէս, Հ. Մ. Պոտուրեան եւ Հ. Ն. Աւկինեան հրապարակ հանեցին նորանոր գէմքեր եւ գործեր, Մանուկ Աբեղեան լոյս ընծայեց հմտալից ուսումնասիրութիւններ այդ մարդին վերաբերեալ, եւ այլն: Ուրիշներ նմանապէս ջանքեր թափեցին այդ ուղղութեամբ: Բայց եւ այնպէս, դեռ շատ քան կայ անլիք՝ բազմակողմանի կերպով ներկայացնելու համար միջնագրեան հայ բանաստեղծներին— եւ ոչ թէ ոսկական «աշուղներին»— դէմքը, նրանց ստեղծագործութեան արժէքը:

Հայ մատենագրութիւնը, յայտնի է, շատոնց իր վրայ հրաւրել է եւրոպացի բանասէրներ ի պաշտօնութիւնը: Այդ հետաքրքրութեան ենթ ուղարկուած մենք եւս այն իրողութիւնը, որ մեր հին դպրութեան զլիաւոր դործերը գրեթէ ամէնն էլ թարգմանուած են եւրոպական մէկ կամ մի քանի լեզուներով: Նոյն այդ հետաքրքրութիւնը չի տարածուել սակայն, հասկանալի պատճառներով, մեր միջնագրեան եւ նոր ժամանակների գեղեցիկ, ինչպէս նաեւ ժողովրդական, գրականութեան վրայ: Բայց եւ այնպէս, գտնուել են եւրոպացիներ, որ մեղիք մէկ դար առաջ արդէն ուղարկութեան առարկայ են դարձրել հայ ժողովրդական գրականութիւնը: Այսպէս, գերման ուղիղիք բարոն Ֆոն Հալքստ-հաուզեմն առաջինն էր որ անցեալ դարու քառասնական թուականներին մի շարք հէգեալներ

ժողովեց Հայաստանում եւ Հրատարակութեան տուաւ գերմաներէն լեզուով: Նոյն այդ տարիներին, մի ուրիշ գերման ուղեգիր, ծանօթ բանաստեղծ Բոդենշտէտ, հայ ժող. երգերի նմուշներ Հրատարակեց, դարձեալ գերմաներէն լեզուով:

Այդ այդպէս լինելով հանդերձ, դերազանցապէս նայ զրազէտմանի է պատկանում նախաձեռնութիւնը այդ ուղղութեամբ մեր միջնադարեան ու նոր դրականութեան նմուշները օտարներին ծանօթացնելու աշխատանքը: Այսպէս, վերոյիշեալ գերման գրադէտներին՝ Հաբլստատեղէնի եւ Բոդենշտէտին նիւթ մատակարարողը, աւելին՝ իր իսկ հաւաքած նիւթը գերմաներէնի վերածողը եւ նրանց տրամադրութեան տակ գնողը ոչ այլ ոք եղել է, եթէ ոչ՝ մեր անմահ իսպառուր Արովեանը: Այնուհետեւ մեծահուն Ալիշանն էր որ 1852 թ. անգլիերէն լեզուով լոյս ընծայեց հայ ժող. երգերի մի հատորիկ: Դարձեալ ծանօթ բանասէր Գրիգոր Խալաթեանցին ենք պարտական մենք Գ. Սրուանձտեանցի «Մհերի Դուռ» գերմաներէն թարգմանութիւնը՝ լոյս տեսած անցեալ դարու ութսունական թուականներին Արգար Յովհաննէսեանի խմբագրութեամբ Հայրէջիկում Հրատարակողը «Հայկական Մատենագարան» շարքի մէջ:

Հայ եւ եղած վերջապէս — Կ. Կոստանեանց, Գ. Մակինցեան, Կ. Միքայէլեան եւ ուրիշներ — անմիջական աշխույժները եւ գործակիցները ոռոս բանաստեղծ Վալերի Բրիւսովի, որ պատերազմի տարիներին (1916) մի մեծ հատոր Հրատարակեց ուսերէն լեզուով եւ «Հայաստանի Բանաստեղծութիւնը» վերնագրով: (Նման մի մեծ գործ պարտաստութեան մէջ է եւ Ներկայիս): Բրիւսով, յայտնի է, մեծապէս օգտուել է նաեւ Չոպանեանի աշխատութիւններից: Շատ աւելի առաջ, վերոյիշեալ Արգար Յովհաննէսեանի աշխատակից եւ բարեկամ՝ Թիֆլիսահայ Գերմանացի Արքուր Լայստ (Arthur Leist), 1898ին Լայպցիգում Հրատարակել էր « Հայ բանաստեղծներ » անունով թարգմանական մի հատորիկ (2րդ տպագրութիւն՝ 1912 թ.), ուր ներկայացուած են ոչ միայն արեւմտահայ եւ արեւելահայ ժամանակակից բանաստեղծներ, այլ եւ նմուշներ մեր

միջնադարեան, աշուղական եւ արդի ժողովրդական գրականութիւնից:

Միջնադարեան Հայ բանաստեղծութիւնը եւրոպացիներին ծանօթացնելու գործի մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի է այն մեծ ծառայութիւնը, որ տասնամեակների ընթացքում մատուցել է եւ շարունակում է անխոնջ կերպով մատուցանել Ա. Զօպանեան: Վերջինիս այդ կարգի աշխատանքները ամփոփուած են, յայտնի է, Փրանսերէն մի քանի հատորների մէջ — Les Trouvères Arméniens, La Roseraie d'Arménie, եւ այլն:

Այդ Հրատարակութեանց կողմնակի արդիւնքն է ահա եւ այն, որ մեր միջնադարեան բանաստեղծութեան արքայի՝ Նախագիտ Գուշակի երգերից մէկ հարիւրեակ (ճիշդը՝ 112 կտոր) տարիներ առաջ արդէն լոյս է տեսած գերմաներէն լեզուով . մի առանձին հատորի մէջ, Աշխատութեամբ բանաստեղծ դոքտ. Հանս Բեթգէի (Hans Bethge): Հատորը տպուած է 1924 թ. Բերլինում, Գրուլենդալեան Հրատարակչական տան (Gyldendalscher Verlag) կողմից: Դրանից մի երկու տարի յետոյ, եւ ատի՞թ ունեցայ ծանօթանալու բանաստեղծի հետ, զրուցելու իր կատարած աշխատանքի մասին եւ վերահասու լինելու վերջնոյս մի քանի մանրամասնութիւններին եւ պարագաներին: Այս տարի նմանապէս, որոշած լինելով իր գործի մասին մի յօդուած՝ զրել «Անահիտ»ի համար, մի քանի անգամ ատի՞թ ունեցայ եւ իօսելու հետը եւ անդրադառնալու նոյն այդ խնդիրներին: Ու իր յիշեալ հատորի՝ Նահագիտ Գուշակի գերմաներէն թարգմանութեան՝ մասին է ահա, որ կ'ուզէի համառօտ անդեկութիւններ տալ հանդէսին ընթերցողներին: Բայց մինչ այդ՝ մի քանի խօսք իր իսկ՝ Նահագիտ Գուշակի գերման թարգմանիչ Հանս Բեթգէի զրական գործերի մասին, առհասարակ:

Հանս Բեթգէ երիտասարդ գրագետ չէ այլ եւս: Նա ծնած է 9 յունուարի 1876 թ., Գերմանիոյ Անհալթ երկրամասի Դեսաու (Dessau) քաղաքում: Բնակութիւն հաստատած է Բերլինում, ինքզինքը գրականութեան նուիրելով:

Տակաւին երրորտարդ՝ նա ճամբորդութիւններ է կատարել զանազան երկիրներ եւ մանաւանդ՝ Արեւելք։ Եղել է Սպանիա Տոմաթատան, Փոքր Ասիա, Աֆրիկա, Եգիպտոս, Եւսպին։ Այնտեղ է ի մօտոյ ծանօթանալ այլացից ժողովուրդներին կեանքին եւ սովորութիւններին, նրանց հոգեկան ստեղծագործութեանց եւ գրական գանձերին։ Հետագային, ինքզինքը գրականութեան եւ ի մասնաւորի զուտ բանաստեղծութեան նուիրելով, Բեթգէ յատուկ նպատակ է առնալորել իրեն՝ գերման րնթերցողներին առկա բանալու օտար ազգերի գրական-քնարական գանձերը, այստ փոխադրութեանց կերպարանքի տակ։ Դրանով չեն սահմանափակուած, ի հարկէ, իր գործերը։ Բեթգէ ունի բանաստեղծական ինքնազիր հատորներ եւս, ինչպէս նաեւ վէպեր եւ փիլակներ, այլ եւ պատմական ու քննական էջեր։ Իր գլխաւոր գործերը սակայն զուտ քնարերգութեան մարդին են վերաբերում, արձակ եւ մանաւանդ՝ չափածոք։ Չհաշուած բազմաթիւ մանր գործեր՝ երկու տասնեակից աւելի են առանձին գրքերով լոյս տեսած իր գրական հատորները։ Յիշենք մի քանիսը միայն։ Այսպէս՝ «Լարանուազ» ժողովածուն իր ոտանաւորների՝ ամփոփուած չորս հատորի մէջ, «Փերման Տագեր», «Վաղաճաս Սրգեր» քնարերգական հատորները, «Անհաւատարիմը» խորագրով ժողովածուն իր նորավէպերի, «Դեպին Կատուն» եւ «Արարէլայ» վէպերը, «Փերման Քնարերգութիւն» հատորի ռոմանտիկ օտարաբան գործեր, «Եղիպտական Ճամբորդութիւն» անոնով ուղեգրական աշխատութիւնը, եւ այլն։

Եւ սակայն, Հանս Բեթգէ ժամանակակից գերման գրականութեան մէջ անուն է հանել աւելի իր պատ-քաղցմանակամ հաստորներով։ Այս վերջիններս բառացի վերաբառագրութիւններ չեն քնադիրներ իւր եւ ոչ իսկ հաւատարիմ վերաբառագրութիւններ ըստ իմաստի, այլ աւելի շուտ՝ կէս-թարգմանական եւ կէս-ինքնազիր գործեր՝ վերամշակումներ, երբեմն նաեւ վերստեղծումներ սկսբնազիր գործերի։ Իր առջին ունենալով այս կամ այն բանաստեղծական գրութեմք, Բեթգէ առնում է նրանց հիմնական

միտքը, էական գծերը միայն, ապա թէ անցկացնելով իր՝ որպէս ինքնուրոյն բանաստեղծի՝ հոգու պրիմալով, նա մի նոր գոյն, մի նոր կերպարանք է տալիս նրանց, յաճախ վերնստեղծում է նորոյ։ Այնպէս որ, միանգամայն սխալ պիտի լինէր իր այդ կարգի գործերը սոսկ թարգմանութիւն անուանել եւ այդ տեսակէտից էլ մօտենալ նրանց։ Եթէ ինքնազիր բանաստեղծութիւններ չեն դրանք ամէնը, չեն նաեւ թարգմանութիւններ սովորական առումով, այլ յաճախ, ինչպէս ասացինք, վերստեղծութիւններ։ Բանաստեղծի՝ իր ցանկութիւնն է նաեւ, ժողովուրդին անհաշիւ երբեք այդ պարագան։ Բեթգէի բոլոր միւս «թարգմանական» հատորների նման՝ նոյնն է ահա նաեւ. նախապէս Քուչակի պարագան։

Բեթգէի վերամշակած կամ վերստեղծած հատորներից մի քանիսը գտել են բաւական մեծ յաջողութիւն։ Ամենից լայն տարածում ունեցել է չին քնարերգութեանը նուիրած իր հատորը, որ կրում է «Ջինական Սրինգ» խորագիրը։ Ճարդ սպաղորուել են 54 հազար օրինակներ։ Հատորը չարունակում է ի հարկէ լոյս տեսնել միշտ նոր սպաղորութիւններով։ Մեծ յաջողութիւն է գտել նաեւ ճափոն քնարերգութեանը նուիրած գործը, որ ունի 6 ձափոնական Գարուն» վերնագիրը (34 հազար օրինակ)։ Տարածման կողմից երրորդ տեղը բռնում է Հաֆթալին նուիրուած հատորը (18 հազար օրինակ), որ վերամշակումն է հուշակաւոր բանաստեղծի քնարերգութեանց։ Պարսիկ նշանաւորագոյն բանաստեղծի՝ Օմար Խայյամին նուիրուած հատորը (լոյս տեսած 1921 թ.) սակայն, զարմանալիորէն շատ աւելի նուազ սպաղում է ունեցել, հազու վեց հազար օրինակ։ Աւելի մեծ յաջողութիւն են գտած, քողահալաւակը, «Թուրքական երգարան» (11 հազար օր.), «Հնդկական Տաւիթ» (10 հազար օր.), «Արաբական Գիւշերներ» (18րդ սուլ.) եւ մի երկու տրիշ հատորներ։ Բեթգէ հրատարակած է նաեւ անհասարակ օտար քնարերգութեանց յատուկ մի ժողովածու, «Օտարազգի Նոր Քնարերգութիւն» վերնագրով։ Պատրաստութեան մէջ են ու

* * *

Այժմ անցնենք Նահապետ Գուշակի դերմասնորդին՝ հրատարակութեանը: Ասացինք՝ լոյս է տեսած 1924ին: Տիտղոսաթերթի վերնագիրն է «Հայ Սոխակը» (Die Armenische Nachtigall): Յաջորդ թերթի վրայ կրկնուած է այդ վերնագիրը («Հայ Սոխակը») եւ տակը տւելցուած «Երգեր Նոստալու Գուշակի» խորագիրը: Հաւորը բաղկացած է ընդամենը 134 էջից: Տպագրուած է երեք հազար օրինակ, ինչպէս հազարգեցին ինձ Հանս Բեթգէ եւ իր գործը հրատարակող տունը: Հատորի վերը կցուած մի ծանօթութիւն տեղեկացնում է մեզ թէ զիրքը տպուել է 1924 թ. Գրւիզնիայ հրատ. տան տրպարանում, Բերլին: Կազմի յարգարանքը կատարել է Georg A. Mathey: Երկու հարիւր օրինակ, ասուած է տպուած է ամենաընտիր թուղթի վրայ, գրանցից էլ 50 հատ կրում են բանաստեղծի ձեռագիր ստորագրութիւնը եւ ունին մագաղաթի կազմ: Մնացեալ 150 հատը ունին մետաքսի կազմ: Իմ ձեռքիս տակ եղած օրինակը այս վերջիններից է: «Հայ Սոխակը» հատորը հրատարակող տան (Gylendal) իրաւունքները ներկայիս փոխանցուած են Universitas հրատարակութեանը (Բերլին): Վերջինիս տնօրէնը յայտնեց ինձ, թէ տարիներից ի վեր սպառած են Գուշակի գերմաներէն թարգմանութեան բոլոր օրինակները, եւ սակայն մտադրութիւն չունին նոր տպագրութեամբ լոյս ընծայելու: Իր արտաքինով սովորական թերթածախի դիրք չունի հատորը, այլ մի տեսակ բլոքի կերպարանք: Լայնը (ձախից-աջ) աւելի մեծ է, քան երկայնը (վերից-իստ) : Տպագրութեան համար գործածուած չեն բոլոր թերթէնը, այլ՝ տպուած իւրաքանչիւր երկէջին յաջորդում են երկու աղատ, ճերմակ թղթուած թերթէջեր: Ու այսպէս՝ ըստ կազմին: Տպագրութեան այս իւրատեսակ արտաքինն եւս ցոյց է տալիս, որ թարգմանիչ ու հրատարակիչ արտաւորքի ձեւ եւս կամեցել տալ ներկայ հատորի հրատարակութեանը:

«Հայ Սոխակը» հատորին Բեթգէ կցել է մի վերջաբան, որի մէջ նա պարզում է իր այս գործի պատրաստութեան պարագաները: Մածութեանքը նրան: «Մտնում առաջին անգամն է Գերմանիոյ մէջ ներկայացուած մի Ժողովածու դա-

սական բանաստեղծութեանց, որ երբեք է սերոյ ամենափայլուն երդինքներից մէկը Արեւելքում, Նահապետ Գուշակ, որ սոյն գրքի խորագրի մէջ Հայ Սոխակն է անուանուած»: Այսպէս է սկսում գերման բանաստեղծը իր խօսքը եւ ապա շարունակում. «Տարբերակ է, որ Գուշակը մինչեւ այսօր գրեթէ անձնօթ է մնացած Գերմանացիներին, որ աւելի քան մի ուրիշ Ժողովուրդ՝ իրենց առջեւ բանալի դիտել են համաշխարհային գրականութիւնը: Վասնզի Արեւելքի ամենէն կախարդիչ բանաստեղծական դէմքերից մէկն է այն երգիչը: Սէր նուազող իր տաւիղի արբեցուցիչ զանգեղութեան մէջ տեղ ունին եւ բուռն կիրքը, եւ մեղմ հեղութիւնը՝ միանգամայն:

«Հայաստանում չունի ի վեր ծագումն են Ժողովրդական երգիչները, որ յայտնի են «աշուղ» անունով: Մեծ բանաստեղծների երգերը նրանք տարածում են երկրի մի ծայրից միւսը, միեւնոյն ժամանակ Ժողովուրդի առաջ երգած իրենց սեփական ստեղծագործութիւնները, որ յաճախ յանկարծեղութիւններ (improvisations) են: Հարուստի թէ աղքատի հարսանքին, Ժողովրդական տոներին թէ նշանաւոր ուխտադնացութիւններին, — միշտ էլ ներկայ են նրանք: Իրենց պաշտպանը Սուրբ Կարապետն է, Գրեթէ ամէն մի աշուղ դէթ մէկ անգամ իր կանգքի մէջ ուխտի է գնում Մշոյ հուշակաւոր վանքը: Այնտեղ է թաղուած արն սուրբը, որից նրանք ազնիւ թոխք, բաղձալի արդիւնք են աղբսում իրենց երգերի համար:

«Կոր են ծնած չատ աշուղներ: Այդ կոյր երգիչները մեծ մասով գոհանում են կօնսական երգեր երգելով միայն: Ժողովուրդը նրանց յարգում է որպէս մի տեսակ սուրբեր: Բոլոր աշուղները նուազում են առդ, բարաւոր մի պարզ գործիք, որին շատերը տիրապետում են մեծ արուեստով: Ժողովրդական երգիչներից ոմանք դրել կարգաւ չղտեն: Նրանք աշակերտում են աւելի տարիքաւոր վարպետները ու նրանցից սովորում արուեստի կանոնները: Հայրենասիրտը են բոլոր աշուղները, թափա — ուում են երկրի մի ծայրից միւսը, ինչպէս երբեմն Տրանսիայի տրուբատուներն էին անում: Միայն թէ, նրանք չեն ապրում զգեանքներում, այլ մեծ մասով խեղճ մարգոց խրճիթ-

ներում: Ամէն մի աշուղ մշակում է իրեն յատուկ եղանակը, նայած իր տաղանդին եւ խառնուածքին: Վիպերդութիւնը բոլորովին յետ է մնում, ծաղկում է իրօնական, իրատական, աւանդակալային եւ սիրոյ բանաստեղծութիւնը:

«Այս ժողովրդական երգիչները աղքատ մարդիկ են միշտ ու հանապաղ: Միայն սաղը ուտելին, ուրիշ ոչինչ, նրանք թափառում են մի տեղից ուրիշ տեղ: Գիւղերում ցանկալի հիւր են մանաւանդ ձմեռ տառն, երբ դիպցա՞յք զաշտային աշխատանքներից յետոյ իրենց տաք խոր-ճիթներն են քաշուած լինում: Այդ օրերին, ամէն կողմից ի մի հաւաքուած այդ պարզ մարդիկ հիացցոյ՜ ու նուիրուածութեամբ են ականջ ղնում նրանց երգերին ու տաղերին, որ մեծ մասով աւելի սիրելի են նրանց. քան եկեղեցական երգերը եւ քահանաների պատմած աւանդակները:

«Առուղ էր Հայաստանի ամենանշանաւոր բանաստեղծն եւս՝ Նախապետ Քուչակ: Մենք ուրիշ բան չգիտենք իր մասին, ոչ իսկ իր պարած դարը յայտնի է որոշապէս. հաւանօրէն՝ տասնեկէցերորդ դարը:

«Քուչակ՝ բանաստեղծութիւնները բաղկացած են մի քանի հարիւր փոքրիկ ոտանաւորներից, որոնք մեծ մասով բառականք են: Այդ արտայայտիչ ձեւը որ Արեւելքի հնչեակ (ստեղծ) անուանել կարելի է, նա փոխ է առել - Պարսիկներից, որոնք եւ իրենց հերթին, ի դէպ, Արարներից են առել զայն: Պարսիկները, եւ ամենից առաջ Օմար Քայնամը, Առաջաւոր Ասիոյ քնարերգութեան ամենաժողովրդական ձեւին են հասցրել բառականք: Քուչակ փոխ է առել այդ ձեւը եւ բոլորովին ինքնատիպ եղանակով ու յաճախ յափշտակիչ կերպով լեցրել այն՝ ամեն յոյդերով իր մանրիկ ու աղերջանիկ սիրով սիրող մարդոց: Առաջաւոր Ասիայում կան թերեւս աւելի մշակուած, աւելի ողեղէն սիրային երգեր— աչքի առջև քերենք օրինակ Հափլըրը, աւելի բուռն, աւելի բոցեղէն ու աւելի բարձր թուիչքով սիրային երգեր տակայն՝ ո՛չ երբեք: Արեւելիան են զբօսե՜լ մինչեւ իրենց ամենաշուրջ թելերը, յաճախ՝ չափէն աւելի ղեղուն են իրենց պատկերներն ու նմանութիւնները եւ ոչ թէ հաղորդակց անպատճառօրէն:

Գլխաթանութեան փողփողուն մոլեղնութեամբ: Երանութիւն ու անէ՛ծք, սիրոյ նախանձ, յափշտակութիւն, կարօտ ու կատարում մըն թաղձանքների, հաւատ ու կսոված, կարճ՝ սիրող սրտի ամէն տեսակ ցանկութիւններ ու տանջանքներ վէտվէտների ծփում են զգացմունքներն այս յաւէտ փոթորկայտոյ ծոփի մէջ: Ինչ որ հասարակաց է բոլոր ոտանաւորներին, — կշռոյթի հրաշալիօրէն կենդանի շունչն է այդ, այլ եւ՝ ա՛յնպէս բնական, բանականութեան ո՛չ մի խոչընդոտի կողմից կանխող քաղցրանուագ առատութիւնը, հեղեղը խօսքերի: Առաւել՝ արուեստաշատ են Պարսիկները եւ աւելի՛ գրական, պարփակուած՝ մի հին ու մեծ պայմանադրականութեան շրջանակի մէջ: Եւ սակայն, Քուչակի քոփ ամենալճիւտ, կուտակաղէլ ղէպի եթէր հոսող հնչիւննի՛րն են սրտի, որ ցօղում են մեղ լցուած, սիրուն արտաքին առատարուղի աղբիւրի եւ կամ վայրի աղանձ կանչերի նման: Քուչակի երգերը ժողովրդական երգերի բնոյթն ունին, եւ շատերը նրանցից իսկապէս որ ժողովրդական երգ են դարձած: Այդ երգերը նմանուած են այն փոքրիկ, վայրեն ու փարթաւօրէն աճող վարդերին, որոնք անտառների եղբայրն են անու՛ծ ծիրանեղոյն, որոնց վրայ ճառագայթող ցօղն է նշատում: Գեղջուկ աղջիկներն են փրցնում այդ վարդերը՝ իրենց փարթամ վարսերը պննելու համար նրանցով:

«Եւ փորձ եմ արել՝ դերմաներէն ոտանաւորի վերածելու մէկ հարիւրեակ այդ պատկերներից, որ ինձ ամենէն գեղեցիկներն են երեւցել: Հաւանաբապէս բնական ու գեղեցիկօրէն աճած այդ պատկերներից սրտի ձա՛յնն է հնչում, ա՛յնքան խոր ու ա՛յնպէս վճիռ կերպով, յաճախ նաեւ՝ աղաղակը սրտի:

«Ինձ տրամադրուած նիւթը, Փրանսերէն արձակով, պարտական եմ եւ հայ բանաստեղծ Արշակ Զօպանեանին, որ Փրանսերէն լեղովով մի քանի արժէքաւոր գրքեր է լոյս ընծայել իր հայրենի գրականութեան մասին եւ Փարիզում հրատարակել Նահապետ Քուչակի «Իւրանը», հայերէն: Պարսի Զօպանեան սիրալիկ կերպով իմ տրամադրութեան տակ էր դրել նաեւ ձեռագիր նիւթ, որի համար եւ մանաւորապէս շնորհապարտ եմ իրեն: Քուչակի մի շարք եր-

գերը այստեղ առաջին անգամն են լոյս տեսնում եւրոպական մի լեզուով:»

Մենք զուհանում ենք զերման բանաստեղծի այս խոսքերը վերաբարձրելով միայն եւ պէտք չենք տեսնում արտայայտուել նրանց մասին: Կարելորդ ինքնին այն բարձր գնահատակամ է, որ նա յայտնում է Քուչակի մասին: Վերջինիս արժէքը չի պակսում բնաւ, եւրոպական շափանիչով եւս, որ բաղդատարար քիչ տարածում է ունեցել նրա գերմաներէն թարգմանութիւնը, թէեւ շատոնց սպառած: (Ուրախ պիտի լինէր մեր գրականութիւնը, եթէ իայնքեմ քնադիրը զէթ նոյն շափով սպառած, գտած լինէր): Օմար Ոսայի մի նման մէկի թարգմանութիւնը եւս, կատարուած նոյն բանաստեղծի ձեռքով, արդարօրէն սպասուած «յաջողութիւնը» ունեցած չէ:

Մեզ չառ հետաքրքրեց նաեւ այն հարցը, թէ ժամանակին ինչպէս է արտայայտուել զերման քննադատութիւնը Քուչակի ստեղծագործութեան եւ նրա գերմաներէն փոխադրութեան մասին: Մեր կատարած պրպոտմանը զեղբարտար չզոգացրին մեզ, չզոգացրին նաեւ Նաւապետ Քուչակի Դիւանի պատուական հրատարակչին, որ— հասկանալիօրէն— նմանապէս ջերմ հետաքրքրութիւն է հանդէս բերում այդ խնդրի վերաբերմամբ: Հանա Բեթգէ ինքն եւս յայտնեց մեզ մի քանի անգամ, թէ՛ մէկի բացատրութեամբ՝ իրեն ծանօթ չէ ունէ այլ քննադատութիւն Ն. Քուչակի գերմաներէն հրատարակութեան մասին, եւ թէ ինք այդ մէկ հատիկ դրախտական Պ. Զօպանեանի տրամադրութեան տակ է գրել: Հրատարակչական Տան տնօրէնը եւս, Դօքտ. Մայէր, իմ յատուկ խնդրանքիս վրայ սիրալիօրէն պլըպտումներ արաւ իրենց գիւնում, բայց դարձեալ առանց արդիւնքի:

Անկարելի չէ, ի հարկէ, օր ժամանակին գերման ուրիշ թէթիթի եւս արտայայտուած լինին Բեթգէի հատորի մասին, թէեւ չառ էլ հաւանական չի թուում մեզ այդ: Այլապէս, զերման թերթերը սովորութիւն ունին՝ դրախտականներէն գէթ մէկական օրինակ հրատարակչին կամ հեղինակին ուղարկելու, որոնք դժուար թէ ոչնչացրած լինէին այդ ամէնը եւ

կամ ոչինչ չլիչէին դրանց գոյութեան մասին: Ես ինքս եւս, զէթ 1926ից առդին, մամուլի բիւրօներէ միջոցաւ ի վիճակի եմ եղած միշտ՝ իրադէկ լինելու զերման կարեւոր թերթերում հայաստանի եւ հայ գրականութեան, հայ կենսաքի մասին երեւցող յօդուածներին, եւ սակայն՝ դարձեալ չեմ յիշում նման գրախօսականներ: Այդ պարագան եւս զարմանալի չէ, ի հարկէ: Մո՛ղ է զերման գրականութիւնը, ա՛մէն տարի տասնեակ հազարներով նոր գրքեր են լոյս տեսնում այս երկրում ու հնարաւոր էլ չէ՛ մամուլի համար՝ անդրադառնալու արդ բոլորին: Գրախօսուած լինելը կամ չլինելը չափանիշ չէ՛ մի գրքի ներքին արժէքի:

Մնում է մեր այստեղ առաջ բերենք մեզ տրամադրելի այն միակ գրախօսակա՛նը. որ ժամանակին (12 յուլ. 1925) ապուէլ է Բերլինի Taegliche Rundschau («Ամեմօրեայ Տեսութիւն») օրաթերթի մէջ: Մտաւորական շրջանակների թերթ էր համարւում այն, չափաւոր ակզայնական ուղղութեամբ եւ մօտ կեցած՝ Եթերգէմանի ժող. կուսակցութեան: Մրանից մի քանի տարի առաջ դադարեց այդ թերթը, երկար ժամանակ գոյութիւնը պահպանելուց եւ հրատարակչներ ու խմբագիրներ փոխելուց յետոյ:

Յիշեալ գրախօսականը, որ Պ. Հանա Բեթգէն ուղարկած է եղել Պ. Արշակ Զօպանեանին եւ վերջինս էլ սիրալիօրօրէն ինձ տրամադրել, կրում է սոսկ երեք սկզբնատաւերից բաղկացած մի ստորագրութիւն՝ . . . : Ինքնուրոյն միտք, քննական արտայայտութիւններ չի պարունակում այդ պարզ գրախօսութիւնը: Իր հերթին՝ նա ամփոփումն է Բեթգէի վերջաբանին, որ վերը առաջ բերինք ամբողջովին: Բայց եւ այնպէս, Ն. Քուչակի գերմաներէն հրատարակութեան նուիրումն մեր այս յօդուածը կարելոյն չափ լրիւ անելու համար, առաջ բերինք նաեւ այդ գրախօսականը, ամբողջապէս: Ահա այն:

«Հանա Բեթգէ՛ «Հայ սոխակ» (Բերլին, Դիւլդենդէլեան հրատարակութիւն): Գէորգ Ալեքս. Մաթէի ձեռքով յարդարուած եւ բլրքի ձեւով տպուած այս գիրքը առաջինն է որ ծանօթացնում է մեզ Արեւելքի սիրոյ երգչիների

ամենափայլուն ներկայացուցիչներից մեկի՝ Նախագիտ Գուշակի հետ, որ «Հայ Արխան» է կոչուած: Հայ բանաստեղծութիւնը ստեղծագործութիւնն է բուն իսկ Հայ-ժողովրդական երգի: Անուղ անուշով ծանօթ ժող. երգիչները որոտուած են երկրի այս կամ այն կողմը՝ հարսանիքին, ժողովրդական աստեղծին եւ մեծ ուխտագնացութիւններին ուրախութիւն տարածելու համար ժողովրդեան մէջ, նրա ոգին բարձրացրելու իրենց լարաւոր պարզ գործիքի միջոցով: Այդ՝ յաճախ կոյր՝ աշուղները, որ սուրբերի նման յարզ են վայելում ու աղքատ են միշտ էլ, շին մշակում վիթրիւրական բանաստեղծութիւն, այլ կրօնական, աւանդավիպային եւ սիրոյ բանաստեղծութիւն:

Այդպիսի մի աշուղ էր ա՛ա նաեւ Նահապետ Գուշակը, որ ենթադրաբար ԺՁ-րդ դարում է ապրել, եւ որի մասին մեզ ուրիշ ուշիկն յայտնի չէ: Նրա ոտանաւորները մեծ մասով քառականներ են: Մանօթ են զրանցից մի քանի հարիւրակ: Բեթգէն ներկայացնում է աշտուղ մի հատրնար ժողովածու, 112 կտորից բաղկացած: Գտնակաների այդ տեսակը ծանօթ է մեզ պարսիկ Օմար Նոյամից: Գուշակը հաւասար վարպետութեամբ գիտէ օգտուել այլ եղանակից: Իր յանկրկների բովանդակութիւնը, անշուշտ, որպէս բուն սիրոյ բացառունք արտայայտութիւն՝ գերապանց է Արեւելքի բոլոր միւս բանաստեղծների, դրանց թուում նաեւ նրբոյի ու մշակոյթի տէր Հաֆիզի բաղդատութեամբ: Գուշակը բուն իսկ, անմիջական Արեւելքն է ինքնին, սիրաղեղուն՝ ղուլկոյութեան աստիճան: Մերոյ այդ ժողովրդայնութիւնը հիանալիորէն արտայայտուած է իր յանդաւոր պատկերների ու կէտոյթի մէջ: Այդ պատճառով եւ նա աղում է զլլիւի կերպով, կախարդում մեզ՝ ժողովրդական բանաստեղծութեանը միայն յատուկ յանդիցիչ եղանակով: Որպէս թարգմանիչ՝ Բեթգէն կարողացել է, իմ հասկացողութեամբ, ամենուրեք տալ բանաստեղծական լրիւ արտայայտութիւն: Եւ որովհետեւ Գուշակի ոտանաւորները առաջին անգամ են լոյս տեսնում այստեղ եւրոպական մի լեզուով, այդ պատճառով գիտական արժէք եւս ունի ներկայ զեղեցիկ հաստոր: Բնահարազատ սիրային բանաստեղծութեան բարեկամնե-

րը միշտ էլ նոր ի նորոյ պիտի սուղութիւն Արեւելքի այս փարթամ վարդերի մէջ:

×

Մնում է այժմ մի քանի խօսք տակ Բեթգէնի թարգմանութեան, նրա բովանդակութեան մասին: Յիշեցինք արդէն, որ ընդամէնը 112 կտոր է պարունակում այդ հատորը: Ասացինք նաեւ, որ Ա. Զօպանեանի կատարած Փրանսերէն թարգմանութեանց վրայից— մէկ մասով՝ ձեռագիր— է արուած գերմաներէն փոխադրութիւնը: (Բեթգէն հայերէն չգիտէ, եւ ոչ էլ ռուսերէն): Արդ, յայտնի է որ ամէն մի թարգմանութիւն անհասարակ՝ շատ քան է կորցնում իր սկզբնաղբի ոգուց եւ իմաստից: Առաւել եւս երբ զուտ բանաստեղծական, մանաւանդ քնարական գրուածք է թարգմանութեան առարկան: Որոշ չափով տարբեր է սակայն պարագան, երբ թարգմանիչը ինքը միեւնոյն ժամանակ կոչեցեալ բանաստեղծ է, յատկապէս քնարերգական: Վերջինիս համար բաղդատաբար դիւրին է ի հարկէ թափանցել իր սկզբնաղբի ոգին ու հրահարաւոր հարազատութեամբ ներկայացնել իր լեզուով:

Այս է նաեւ Գուշակի գերմաներէն թարգմանութեան պարագան: Բեթգէն քնարերգակ բանաստեղծ է գերագանցօրէն: Աւելին՝ քուշակեան տիպի քնարերգու է նա, — սիրերգակ: Հասկանալի է ուրեմն, թէ ինչպէս է որ յաղդուել է նրան կարելի հարապատութեամբ ներկայացնել մեր Գուշակի գերման լեզուով, մնալով հանգեւած ազատ փոխադրողի, մերմահակողի իր գերում: Հարկաւ՝ ողու, էութեան հարապատութեամբ միայն: Եւ ինչպէս որ հանդ. Յովհաննէս Թումանեանն էր ասում «Անուշ» պոէմի ոտուերէն թարգմանութեան մասին, թէ իր Անուշն է այն, միայն թէ չէի ասելորով, մտաւորապէս նոյնը կարելի է չէի նաեւ Գուշակի գերմաներէն փոխադրութեան մասին: Այլ կերպ էլ լինել կարող էր, ի հարկէ: Սմէն մի աղբ իր պատկերի եւ իր նմանութեան ձևով է վերադառնում օտար զրակաւորութեանց դանձերը: Մենք էլ մեր կարգին՝ նման դէպքերում Հայի կերպարանը ենք տալիս դրանց, հայացնում թարգմանի ինքի:

Ճիշդ է, Բեթգէն առաջինն է որ գերմանե-

բէն լեզուով ներկայացրել է Նահապետ Քուչա-
կը առանձին հասարակ, եւ սակայն՝ մեր միջ-
նադարեան՝ բանաստեղծութեան այդ իշխանի
մի քանի երգերի գերմաներէն թարգմանու-
թիւնը լոյս է ընծայուել աւելի առաջ, ուրիշ-
ներէի ձեռնով: Նախ՝ աշխատութեամբը վերը
յիշուած Արթուր Լայստի, որ բանաստեղծ չէր
սակայն, ոչ իսկ առհասարակ գրող՝ իր կոչու-
մով: Արթուր Լայստի «Հայ Բանաստեղծներ»
հատորիկի մէջ (2րդ ապ. 1912 թ., Բերլին,
էջ 78) թարգմանուած են Քուչակից չորս կտոր
(«Այ իմ նոնախալաս», եւ այլն): Մի ուրիշ
գերման քանաստեղծ — զրապէտ, Ջիգֆրիդ Փոն
Ֆեգեսակ, (Siegfried von Vegesack) ռուսե-
լեմից գերմաներէնի է վերածել, ի շարս այլ
բանաստեղծութեանց, մի քանի կտոր նաեւ
Քուչակից: (Տե՛ս P. Rohrbach, " Armenien "
հատորը. Շտուտգարտ 1919):

Բեթգէ իր փոխադրած ամէն մի կտորին
տուել է յատուկ վերնադիր: Եւ որովհետեւ ա-
զատ փոխադրութիւններ են դրանք, այդ պատ-
ճառով էլ, հարկաւ նաեւ իր ընտրած չափի
պահանջով, Քուչակի քառասկիւնքը նա վեր է
ածել կրկնակ եւ աւելի թուով տողերի: Բեթ-
գէի հատորի մէջ տեղ են դրած սիրոյ եւ խրա-
տական երգեր: Մենք պէտք չենք տեսնում
այստեղ մի առ մի թուելու այդ բոլորը եւ բաղ-
դատութիւն անելու հայերէն սկզբնաղբիւրների
հետ, մանաւանդ որ Բեթգէ՝ ձեռքի տակ է ու-
նեցել նաեւ ձեռագիր (Փրանսերէն թարգմա-
նութեամբ) Նիւթեր: Բայց եւ այնպէս, զաղա-
փար տալու համար թարգմանութեան մասին,
առաջ բերենք այստեղ սիրոյ եւ խրատական
երգերից երկուական օրինակ: Նախ կը տանք
հայերէն ընդգիրը, ապա Բեթգէի փոխադրու-
թիւնը, իսկ յետոյ՝ վերջինիս բառացի թարգ-
մանութիւնը մեր կողմից: Ընթերցողը այդ ձե-
ւով հնարաւորութիւն կը ստանայ արդէն՝ ան-
ձամբ անելու բաղդատութիւնը:

×

Առաջին նմուշ.

1. ՀԱՅԵՐԷՆ ՍԱՋՔՆԱԳԻՐԸ (Ն. Քուչակի
Դիւանը, էջ 44).

Լուսի՛ն, պարծնաս, ասեն

«Լուս կրտամ աստեղորիս»:
Ահա հողեղէն լուսին ի գրկին
'ւ երեսն երեսն.
Թէ չես աւառլ այս գերուս,
յետ տանի՛ր քրիէ՛շ կապայիս,
Վախճ սիրոյ տէր լինիս,
լուս պակա՛ս տաս աստեղորիս:

2. ԳԵՐՄԱՆԵՐԷՆԸ
(Բեթգէ, էջ 88)

MONDE

Unsere Erde zu beleuchten,
Ruehmst du dich, o gelber Mond.
Sieh : in meinen Armen halt ich
Einen anderen Mond, der Erde
Ist er angestammt Er schmeichelt
Seine Wange an die meine.
Wenn du mir nicht glaubst, so werd ich
Meines Mondes schoene Robe
Vor dir auseinander spreiten, —
Aber nein ! Ich muss befuerchten,
Dass du rasend wuirst vor Liebe,
Und dann wuerdest du der Erde
Weniger glanz bei Nacht verleihn !

3. ՎԵՐՋԻՆԻՍ ԲԱՌԱՑԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Լ աւսնից

Մեր աշխարհը լուսաւորել պարծենում ես դու,
ո՛ր գեղին լուսին:
Տե՛ս, իմ գրկին մէջ պահում եմ ես
Մի ուրիշ լուսին. հողեղէն է նա: Շփում է նա
իր երեսը իմինիս:
Թէ չես հաւատում դու ինձ,
իմ լուսնին սիրուն փէշը յետ կը տանի՛մ
եւ քու աղջեւ:
Բայց ո՛չ. պիտի վախենամ՝
Որ սիրուց կը մոլիս դու:
Եւ այդ դէպքում, աշխարհին դու
Պակաս լոյս պիտի տայիր գիշերը:

×

Երկրորդ նմուշ.

1. ՀԱՅԵՐԷՆ ՍԱՋՔՆԱԳԻՐԸ (Ն. Քուչա-
կի Դիւանը, էջ 52).

Մէրն երբ ի յաշխարհ եկաւ,
եկաւ իմ սիրտս թառեցաւ.

Հապա իմ սրտէս ի դուրս՝
 յերկրէ յերկիր թափեցաւ,
 եկաւ ի գլուխս ելաւ, եւ յըզեղս
 ելաւ թառեցաւ,
 Աշխարհս արտասունք ուզեց, նա
 արիւն ի վար վաթեցաւ:

2. ԳԵՐՄԱՆՆԵՐԷՆԸ

DIE LIEBE

Da einst die Liebe auf die Erde kam,
 Liess sie sich hin auf meinem Herzen, Bald
 Schwang sie sich fort und flog von Land zu
 land, —

Und dann kam sie zurueck,
 Sie nistete
 In meinem Hirn sich ein und bettelte
 Um Fraenen aus dem Borne meiner Augen, —
 Doch meine Augen stroemten Blut dahin.

(Բեքգէ, էջ 96)

3. ՎԵՐՋԻՆԻՍ ԲԱՌԱՅԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Ս Է Ի Բ
 Սէրը երբ աշխարհ էկաւ,
 Իմ սրտիս վրայ նստաւ: Շուտով
 Վերացաւ նա ու երկրէ երկիր թռաւ, —
 Ապա թէ յետ եկաւ, թառեցաւ
 Ուղեղին մէջ ու աղերսեց
 Արտասուք իմ անհաղորդիցս,
 Բայց նա արիւն վար վաթեց:

Երբորդ մնալ

1. ՀԱՅՆԵՐԷՆ ՍՎԱՅՐԱԳԻՐԸ (ՀՆ. Քուչա-
կի Դիւանը», էջ 94):

Արեւի որ խրատ մի տամ,
 Խելք ու միտք ունիս նա լսէ՝,
 Հետ անդէտին մի՛ դատիր, թէ
 Հաղար որ զքեզ սիրէ:
 Անդէտն՝ ի հուր նման, ուր
 Ընկնի գտեղն կու էրէ,
 Գիտուն ի ջուր նման, ուր
 Երթայ՝ կանանչ բուսեր է:

2. ԳԵՐՄԱՆՆԵՐԷՆԸ

(Բեքգէ, էջ 74)

NARR UND WEISER

Hier ist ein Ratschlag, —

folg ihm, wenn du klug bist.

Geh nie mit einem ausgemachten Dummkopf.
 Und liebt er dich auch innig,

an die Arbeit.

Der Dummkopf ist dem Feuer zu vergleichen.

Das jedes Ding zerstort,

daran es ruehrt,

Der Weise ist dem Wasser zu vergleichen,

In dessen Spuren alles Keimt und aufblueht.

3. ՎԵՐՋԻՆԻՍ ԲԱՌԱՅԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Յ ի մ ա ր ք ե լ ի մ ա ս տ ու լ ի ը

Ահա քեզ խրատ —

Հետեւի՛ր նրան, եթէ խելօք ես.

Մի՛ երթար կատարեալ յիմարի հետ

Գործի, եթէ սրտանց էլ սիրէ նա քեզ:

Յիմարը կրակին է նման,

Որ այրում է ամէն ինչ՝ որին որ

դիպչում է:

Իմաստունը ջուրին է նման,

Որի հետքերով ամէն ինչ

բողբոջում է ու փթթում:

Չորքորդ մնալ

1. ՀԱՅՆԵՐԷՆ ՍՎԱՅՐԱԳԻՐԸ (ՀՆ. Քուչակի Դի-
ւանը», էջ 92)

Յաշխարհս ես ի ժուռ եկայ,

չր դտայ լողորդ սիրելի,

Ջխելքս ի վրաս բերի, զբազուկս

արի սիրելի.

Քանի բազուկս ի բան կենայ,

չա՛տ եղբայր ու չա՛տ սիրելի.

Բազուկս ի բանէ ընկնի, ո՛չ եղբայր,

ո՛չ սիրելի:

ԳԵՐՄԱՆՆԵՐԷՆԸ

(Բեքգէ, էջ 40)

VON DER FREUNDSCHAFT

Ich habe diese Welt durchwandert, niemals
 Hat meine Seele einen wahren Freund
 Gefunden, Da besann ich mich und staerkte
 Die Kraefte meines jungen Armes, und

Mein Arm erwies sich als mein bester Freund.
Heut weiss ich dies und sag es Klar: Solange
Man meines Armes Kraefte fuerchtet, hab ich
Auch viele Freunde, die mir willig dienen,
Wenn erst die Kraefte meines Armes
schwanden,
Wird auch Kein Freund mehr mir zur
Seite stehn.

3. ՎԵՐՋԻՆԻՍ ԲԱՌԱՑԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ
Բարեկամութեան Մասին

Ես ժող. եկայ այս աշխարհս, բնաւ
Ձգտաւ իմ հոգիս մի ճշմարիտ բարեկամ:
Այն ատեն միտք արի ու զօրացրի
Իմ ջանիլ բազուկիս ոյժերը, եւ
Իմ բազուկս եղաւ ամենէն լաւ բարեկամս:
Այսօր գիտեմ ես այդ, եւ ասում եմ
որով— քանի

Մարդիկ վախնան իմ բազուկի ոյժից, եւ
Կ'ունենամ եւ շատ բարեկամներ՝
ինձ հշու ծառայող.

Իսկ երբ բազուկս զրկուի իր ոյժից,
Ո՛չ մի բարեկամ էլ չի մնալ քովս:

×

Վերջացնելուց առաջ աւելցնեմ նաեւ հե-
տեւեալը: Ինչպէս որ տարիներ առաջ արդէն
յայտնել էր ինձ Համս Բեթգէ եւ վերջերս էլ
կրկնեց նոյնը, նա մտադուրթիւն ունի մի ու-
րիշ հատոր եւս լոյս բնծայելու՝ նուիրուած
առհասարակ հայ բանաստեղծութեան— Հա-
տըմտիք փոփոխածու Հայ Բանաստեղծութեան
(Armenische Anthologie): Իր ծրագրած հա-

տորի համար նա ձեռագիր վիճակի մէջ արդէն
իսկ պատրաստ ունի մի շարք Թարգմանութիւն-
ներ— Յովհ. Պլուղից, Կոստանդին Երզնկացի-
ից, Գրիգոր Ալթամարցիից, Նազաշ Յովնաթա-
նից, Սալաթ-Նոփայից, Լուսկիրանոսից, ալ եւ
Աշրղ-Ջիվանիից, Պետրոս Դուրեանից, Մ. Պէ-
շիկթալեանից, Ա. Չօպանեանից, եւ այլն:

Նահապետ Քուշակիին նուիրուած հատորին
նման՝ այդ Թարգմանութիւններն եւս կատար-
ուած են Ա. Չօպանեանի Ֆրանսերէն հրատա-
րակութեանց վրայից: Երազրուած գործը շատ
աւելի պիտի յաճէր, ի հարկէ, եթէ Թարգմա-
նիլը հնարաւորութիւն ունենար գիմելու նաեւ
անմիջական աղբիւրներին՝ հայերէն բնագիրնե-
րին: Ու Բեթգէ կոչ մնաց բնականաբար, լսե-
լով իմ պատրաստակամութիւնս՝ ի հարկին ա-
ջակցելու իրեն իր այդ գործի մէջ: Մոռնալու
չէ հարկաւ նաեւ այն փաստը, որ մեր հին ու
մանաւանդ նոր բանաստեղծներից շատ շատերը
— ճնշող մեծամասնութիւնը— ա՛ռհասարակ
Թարգմանուած չեն Ֆրանսերէն կամ եւրոպա-
կան որ եւ է լեզուով: Հայ բանաստեղծութեանը
նուիրուած Թարգմանական մի ժողովածու, եթէ
ուզում է չի՛չ-շատ լիակատար լինել եւ ամբող-
ջական զաղափար տալ նրա մասին, անկարող է
ի հարկէ անտես առնել այդ պարագան:

Մեծապէս գնահատելի է Հանս Բեթգէի կա-
տարած եւ կատարելիք աշխատանքը՝ գերման
գրասէր հասարակութեան ա՛մեն բանալու Հայ
Բանաստեղծութեան վանձերը:

ԱՐՏԱՇԵՍ ԱՐԲՂԱՆՍ

Բեքլից, հոկտ. 1937